911 Արտակարգ թերթ

N 26 (674)
7-13.07 2017

ISSN 1829-149X

ԱԻՆ
ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF EMERGENSY SITUATIONS OF RA
МИНИСТЕРСТВО ПО ЧРЕЗВЫЧАЙНЫМ СИТУАЦИЯМ РА

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՀՀ ԱԻՆ ԵՎ ՌԴ ԱԻՆ

Գործակցություն

Գումարվել է Հայ-ռուսական մարդասիրական արձագանքման կենտրոնի կառավարման բարձրագույն մարմնի առաջին նիստը՝ ՀՀ ԱԻ նախարարի տեղակալ Էնրիկո Ապրիամովի գլխավորությամբ: Նիստին մասնակցել են նաև ՌԴ ԱԻՆ-ի ներկայացուցիչները: Քննարկվել են կենտրոնի գործունեությանը վերաբերող հարցեր: Ստորագրվել է նաև գործակցային երեք արձանագրություն: Հյուրերը ճանաչողական շրջայց են կատարել կենտրոնի տարածքում, ծանոթացել աշխատանքային պայմաններին, գույքին ու սարքավորումներին:

Օրախնդիր դահանջ

ԱՄԲԻՑԻՈԶ ԱՃ

Կառավարությունը նախատեսում է սեփական եկամուտների, վարչապետի խոսքով, ամբիցիոզ աճ: Այս մասին գործադիրի նիստում հայտարարել է Կարեն Կարապետյանը՝ ներկայացնելով 2017-2022 թվականներին կառավարության գործունեության ուղղությունները: Նա հավաստել է, որ նախատեսում են իրականացնել շատ կոշտ, հաստատուն ծախսերի կառավարում և հանձնարարել տնտեսված միջոցներն ուղղել տնտեսական աճ ապահովող ծրագրերի իրագործմանը:

Գործադիրի նիստում Կարեն Կարապետյանը պահանջել է նաև վերանայել ընտանիքների անապահովության գնահատման համակարգը, նշելով, որ այն հասցեականության ու հստակության տեսանկյունից բավարար արդյունավետ չէ: *«Իրավիճակի կանոնակարգման նպատակով անհրաժեշտ ենք համարում անապահովության գնահատման գործընթացում ուսումնասիրել և հաշվի առնել համապատասխան անձանց բանկային գործարքների, ինչպես նաև գույքային իրավունքների հետ կապված ամբողջական տեղեկությունները»,*- նշել է Կարեն Կարապետյանը: ■

Լուսանկարները՝ www.mes.am-ի

Ուսումնավարժանք

ՄԵՏՐՈՆ՝ ԾԽԻ ՄԵՋ

Օրեր առաջ արտակարգ իրավիճակների նախարարությունը Երևանի Մետրոպոլիտենում անցկացրեց հրշեջ-փրկարարական տակտիկական ուսումնավարժանք, որին հետևում էր նախարար Դավիթ Տոնոյանը: Նման վարժանք մետրոյում անցկացվում էր երկրորդ անգամ:

«Հանրապետության հրապարակ» կայարանում գիշերը, ժամը 22-ին, աշխատում էին բոլոր արտակարգ ծառայությունները՝ ամեն հնարավոր և չնախատեսված, մարդկային կյանքին վտանգավոր իրավիճակներին դիմակայելու համար: Կայարանի մուտքի մոտ հատուկ նշանակության տասնյակ ավտոմեքենաների մեծ կուտակում էր: Այստեղ էին ոստիկանությունը, շտապօգնությունը, քաղաքի ջրագազամատակարար, էլցանցի վթարային խմբերը և, իհարկե, մետրոպոլիտենի անվտանգությունն ապահովող աշխատակիցները: Սցենարի համաձայն՝ որոշեներ առաջ մետրոյում պայթյուն է որոտացել, որի հետևանքով հրդեհ է բռնկվել շարժակարգի վագոններից մեկում: Փրկարարներն իրավիճակը գնահատեցին վայրկենական և անցան հետևողական ու հաշվարկված գործողությունների: Կառամատույցում կանգնած երկվագոնավոր էլեկտրագնացքը հոսանքազրկվեց: Պայթյունից վնասված վագոններում չորս վիրավոր կա: Մետրոն ծխի մեջ է: Պայթյունից օդը լցվել է յուրահատուկ հոտով: Իրավապահները հետազոտում են պայթյունի պատճառը: Փրկարարները հատուկ տեխնիկայով դուրս են բերում տուժածներին, ինչից հետո օգնության են հասնում ԱԻՆ-ի բուժհոգեբանական ծառայության աշխատակիցները: Հոգեբանական օգնությունը կարևոր է, աշխատում են տուժածների, ականատեսների հետ: Հակագազերով առաջին օգնության բուժանձնակազմը անում է ամեն հնարավորը տուժածներին ծխից պաշտպանելու համար: Տրամադրում են շնչադիմակներ և պատգարակներով տեղափոխում դրսում՝ մետրոյի մուտքի մոտ տեղակայված առաջին օգնության վրան: Թեև հայտնի է սցենարը, սակայն փրկարարները չգիտեն, թե ինչ է սպասվում իրենց վարժանքում: Վտանգավոր ինտրիգը սովորեցնում է կողմնորոշվել արտակարգ իրավիճակում, վարժեցնում ստուգել ու ճշտել արձագանքող ուժերի պատրաստվածությունը, կատարելագործում անձնակազմի գործնական հմտությունները:

Փրկարարները մտան վագոն, նրանցից մեկը փնտրում է հրդեհի օջախը, մյուսները դուրս են բերում տուժածներին: Արդեն փողրակներով դեպի կրակի լեզվակներն է թռչում մետրոյի հիդրանտներից հոսող ջուրը: Մետրոյում են նաև քիմիական և ռադիոմետրիկ լաբորատորիայի մասնագետները:

Փրկարար ծառայության տնօրեն, փ/ծ գնդապետ Մուշեղ Ղազարյանը տեղեկացնում է լրագրողներին. «90 մարդ տարհանվել է: Նրանց կեսը վիրավորներ են: Պայթյունը որոտացել է վագոնում, որից հրդեհ է բռնկվել»:

Տուժածներին նմանակող 90 կամավոր քաղաքացիները փայլում են իրենց դերում:

Փրկարարական գործի համար մետրոն դժվար միջավայր է, բայց փրկարարներն աշխատեցին ճշգրտորեն, տուժածներին հոգածությամբ տեղափոխեցին կայարանի հարևանությամբ տեղադրված փրկարարական վրան՝ առաջին օգնություն ցուցաբերելու:

Ուսումնավարժանքի ավարտին նախարար Դավիթ Տոնոյանը շնորհակալություն հայտնեց փրկարարներին: Նրանց աշխատանքը գնահատեց «բավարար»:

Վարժանքում թերություններ կային, իսկ «լավ» կամ «գերազանց» գնահատականին հասնելու համար մարզումներ նման վարժանքներում դեռ կլինեն: Նախարարը չմոռացավ գնահատել նաև վարժանքին օգնող կամավոր քաղաքացիների լավ աշխատանքը: ■

Կարևոր

ԱԻՆ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

էջ 2

ԱՐԵՎԱՅԻՆ ՁՐԱՏԱՔԱՅՈՒՅՑԻՉ

էջ 3

ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՄ՝ ԱՄԵՆԱԼԱՎԸ

էջ 4

ՊԱՀԱՆՁՎԱԾ ԵՎ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ

էջ 7

911 Արտակարգ թերթ
N 26 (674)
7-13 հուլիսի, 2017

Առաջադրություն

ԱԻՆ-ի նպատակը ռազմական գործողությունների դեպքում քաղաքաշտպանությանը պատրաստ լինելն է: Հունիսի 30-ին ԱԺ-ում 2016-ի պետբյուջեի կատարողականի հաշվետվության քննարկման ժամանակ հայտարարել է ՀՀ ԱԻ նախարար Դավիթ Տոնոյանը: Միաժամանակ, ըստ նրա, ԱԻՆ կառույցները կօգնեն ոչ միայն սպառնալիքների վերացմանը, այլև ռազմական գործողությունները հակառակորդի տարածք տեղափոխելուն:

ԻՆ ԱՍԵՆ
2

ԱԻՆ-ի գործունեության արդյունքներն ու նպատակները

2016-ի պետբյուջեի կատարողականի հաշվետվություն

Հունիսի 26-ից հուլիսի 5-ը ՀՀ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում քննարկվում էր «ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի կատարման մասին» հաշվետվությունը:

Արտակարգ իրավիճակների նախարարությանը հատկացված գումարների և դրանց ծախսերի ուղղությունների վերաբերյալ հաշվետվությունը լսվեց հունիսի 30-ին՝ պաշտպանության և անվտանգության հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստում: Զեկուցողներն էին արտակարգ իրավիճակների նախարար Դավիթ Տոնոյանն ու ֆինանսների նախարարի առաջին տեղակալ Ատոմ Զանջուղազյանը:

2016-ին արտակարգ իրավիճակների նախարարությունը ստացել է 11,1 մլրդ դրամ և իրականացրել 21 ծրագիր:

2016-ին «911» ծառայությունը 2 191 288 զանգ է ստացել, գրեթե կրկնակի շատ, քան 2015-ին, փրկարար ծառայության ստորաբաժանումները 20 130 ելք են իրականացրել, փրկել 228 մարդու կյանք, 2015-ին փրկվել էր 210 մարդու կյանք, փրկարարներն անցկացրել են հատուկ տակտիկական, շտաբային, հրամանատարաշտաբային և այլ բնույթի վարժանքներ: ԱԻ նախարար Դավիթ Տոնոյանը թվերին զուգահեռ նաև կատարված աշխատանքների արդյունքները ներկայացրեց.

1. Աղետների ռիսկի նվազեցումը կարևորվում է ամբողջ աշխարհում: Կան հաշվարկներ, համաձայն որոնց, այս ոլորտում ներդրումը վեցապատիկ եկամուտ կարող է ապահովել բոլորին: Արտակարգ իրավիճակների նախարարությունը պետական հատկացումներին զուգահեռ նաև միջազգային-դրամաշնորհային ծրագրերով է աշխատանքներ անում:

2. Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումները պատրաստ են ռազմական գործողությունների ընթացքում գործողություններ իրականացնել: Տավուշի մարզի Ազատամուտ և Ներքին Կարմիրաղբյուր գյուղերում արդեն գործում են քաղաքացիական պաշտպանության հենակետեր, ընթացքում է Այգեպար, Պառավաքար, Մովսես, Չինարի, Սարիգյուղ, Կոթի, Ոսկևան, Բերդավան բնակավայրերում հենակետերի շինարարությունը: Յոթ հենակետ արդեն համալրվել է անհրաժեշտ գույքով: Քաղաքացիական պաշտպանության համակարգը պետք է պատրաստ լինի ռազմական գործողությունների վարմանը և այդ գործողությունները հակառակորդի տարածք փոխանցելուն, ռազմական իրավիճակում քաղաքացիական պաշտպանության միջոցառումները արդյունավետ իրականացնելուն:

3. Հայաստանի և Արցախի արտակարգ իրավիճակների համակարգերն աշխատում են համադրված, համակարգված, փոխլրացնող, գործընկերային համագործակցությամբ: Ստորաբաժանումների պատրաստվածության պլանների մեջ ներառված են համատեղ ծրագրեր: Հայաստանը և Արցախը գործում են որպես մեկ միասնական համակարգ՝ տարբեր հրամանատարական ուղղահայացներով:

4. Աղետների ռիսկի նվազեցման-կառավարման ոլորտի կրթության համար օգտագործվում են ինչպես նախկինում մշակված ձեռնարկները, այլ նաև ժամանակակից միջոցներ՝ համակարգչային խաղ-ծրագրեր, սոցկայքեր և այլն: Այս հարցում օգտագործվում է ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի հարուստ փորձը:

5. Հայաստանի ապաստարանները ժամանակին կառուցվել են «Սառը պատերազմի» տրամաբանությամբ: Դրանց մոտ նոր ենթակառուցվածքներ են ստեղծված, և այդ ապաստարանները անվտանգություն չեն ապահովելու: Հիմա փոխվել է ռազմաքաղաքական իրավիճակը: Հիմա նորոգվում-կառուցվում են նոր ապաստարաններ: Գումարած՝ Երևանի մետրոպոլիտենը: Առաջնահերթություն է սահմանամերձ գոտում «Անվտանգ սենյակների» կառուցումը: Ֆինանսական ներդրումները գնալու են այդ ուղղությամբ: ■

Արամ ՁԱՔԱՐՅԱՆ

ՆՈՐ ԿԱՐԳ ՎԱՍՆ ԵՐՁԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ



Հուլիսի 6-ին ՀՀ կառավարությունը հաստատել է «Ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների գույքագրման կարգը», որով սահմանվել են օբյեկտների կարգավիճակը, անվտանգությունը և մարդկանց առողջության և շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները բնութագրող հիմնական ցուցանիշները: Այս կարգը հնարավորություն կտա ապահովել ՀՀ տարածքում առկա ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների գույքագրման մեթոդական հիմքերը և ստեղծել դրանց վերաբերյալ համապարփակ տեղեկատվական բազա՝ հետագա բնապահպանական միջոցառումների մշակման համար:

Հայաստանի տարածքում առկա են ընդերքօգտագործման թափոնների մի շարք փակված օբյեկտներ, սակայն պետական կառավարման լիազոր մարմինները չեն տիրապետում այդ օբյեկտների կարգավիճակի, դրանցում կուտակված ընդերքօգտագործման թափոնների քանակի և ագրեգատային վիճակի, շրջակա միջավայրի վրա դրանց հնարավոր ազդեցությունների վերաբերյալ տեղեկությունների:

Նոր ընդունված կարգով հստակեցվում են ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների գույքագրման մեթոդաբանությունը, գույքագրման ամփոփ տեղեկատվական թերթիկի ձևը: Գույքագրման ընթացքում ստացված տեղեկությունների հիման վրա մշակվելու են ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների տարածքում շրջակա միջավայրի աղտոտվածության մակարդակի որոշման, շրջակա միջավայրին հասցված վնասի գնահատման և աղտոտվածության նվազեցման, չեզոքացման կամ վերացման միջոցառումներ: Գույքագրումը մի քանի բաղկացուցիչ ունի. փակված օբյեկտի նույնականացում, գույքագրման ամփոփ տեղեկատվական թերթիկի պատրաստում, օբյեկտի դասակարգում ըստ վտանգավորության դասի, դաշտային ուսումնասիրություն, որով պարզվելու են օբյեկտի տիպը, զբաղեցրած մակերեսը, կուտակված ընդերքօգտագործման թափոնների ծավալը, ագրեգատային վիճակը, քիմիական բաղադրությունը, վտանգավորության դասը, վնասակար ազդեցության գոտին, շրջակա միջավայրի աղտոտվածության բնույթը:

Այս ամփոփ տեղեկություններն ունենալուց հետո պետական լիազոր մարմինը կորոշի ինչ անել տվյալ օբյեկտը՝ օգտահանել, վերամշակել, կոնսերվացնել և այլն: ■

Հրշեջ-փրկարարական պաշտպանություն

Հրդեհներ՝ չափեր, տևողություն, վայր

Կրակի տարածման հատկանիշով հրդեհները բաժանվում են երկու տեսակի.

1. տարածվող,
2. չտարածվող:

Տարածվող հրդեհներ. Ժամանակի ընթացքում տեղի է ունենում երկրաչափական չափերի (երկարություն, բարձրություն, լայնություն, շառավիղ) աճ:

Չտարածվող հրդեհներ. երկրաչափական չափերը մնում են անփոփոխ:

Հրդեհը ազատ զարգացման ժամանակ կարող է անցնել մեկ տեսակից մյուսին: Ուստի՝ հրդեհների դասակարգումն այրման տարածման հատկանիշով սերտորեն կապված է հրդեհի զարգացման ժամանակի հետ:

Ինչպես տարածվող, այնպես էլ չտարածվող հրդեհները կարող են առաջանալ տարբեր օբյեկտներում:

Ըստ առաջացման վայրերի.

1. քաղաքացիական օբյեկտներում,
2. արդյունաբերական օբյեկտներում,
3. անտառներում,
4. գյուղատնտեսական օբյեկտներում,
5. տրանսպորտում:

Ըստ չափերի.

1. փոքր,
2. միջին,
3. խոշոր:

Հրդեհի չափը որոշվում է մի շարք չափանիշներով.

1. հասցրած վնասի չափ,
2. հրդեհի չափ (մակերես կամ ծավալ, շատրվանի դեբիտ),
3. մարման համար պահանջվող ուժերի և միջոցների քանակ,
4. ստորաբաժանումների հիմնական գործողությունների բարդության աստիճան:

Ըստ տևողության.

1. կարճատև,
2. միջին տևողության,
3. ձգձգվող:

Ըստ վայրի.

1. ստորգետնյա (գետնի մակարդակից ցածր, ցանկացած խորության վրա),
2. վերգետնյա (բարձրության վրա և հասանելի են ձեռքի հրշեջ սանդուղքների օգնությամբ),
3. միջին բարձրաբերձ (բարձրության վրա և հասանելի են ավտոսանդուղքների ու ավտոամբարձիչների օգնությամբ),
4. բարձրաբերձ (ավելի քան 30 մետր բարձրության վրա): ■

Ավագ ՍԻՄՈՆՅԱՆ

Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի «Փրկարարական ամբիոնի» դասախոս

ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Այս տարվա մայիսի 17-19-ն անցկացված հաշմանդամների հանրապետական 15-րդ մարզական փառատոնին մասնակցել է նաև արտակարգ իրավիճակների նախարարության 9 աշխատակից, որոնք ութ մեդալ են վաստակել. 5 ոսկի, 1 արծաթ, 2 բրոնզ: Հաջողության հասած աշխատակիցներին պարգևատրելիս ԱԻ նախարար Դավիթ Տոնոյանն ասել էր, որ շուտով ԱԻ նախարարությունը կունենա «Արտակարգ սպորտային ակումբ»:

Այս ուղղությամբ առաջին քայլն արդեն արված է: Հաշմանդամների բասկետբոլի թիմը, որի կազմում է նաև ԱԻՆ 8 աշխատակից, մարզվելու նոր հնարավորություն ունի: *«Անվասայլակով բասկետբոլի մեր «Արտակարգ» թիմը հնարավորություն ունի շաբաթը երկու անգամ մարզվել Պետական եկամուտների կոմիտեի հաշվեկշռում գտնվող նախկին «ՄԻԿԱ» մարզահամալիրում: Հավատով ենք, որ մարզիչ Հարություն Եսայանի ղեկավարությամբ և կանոնավոր մարզումների դեպքում մենք կկարողանանք մասնակցել արտերկրում կազմակերպվող մրցումներին»,-* հայտարարել է թիմի ավագ, ԱԻՆ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի տեղեկատվության վարչության պետ Սևակ Մխիթարյանը: Առաջիկայում նախատեսվում է ձեռք բերել բասկետբոլի համար նախատեսված հատուկ սայլակներ և անհրաժեշտ գույք: ■

Լուսանկարը՝ www.mes.am-ի

911 Արտակարգ թերթ
N 26 (674)
7-13 հուլիսի, 2017

Գաղթի ճանապարհին

Ըստ ՅՈՒՆԻՍԵՖ-ի՝ տարեկան Արևմտյան և Կենտրոնական Աֆրիկայի՝ գաղթի ճանապարհը բռնած 12 մլն անձանց կեսից ավելին երեխաներ են: Նրանց գրեթե 75 տոկոսը բնակություն է հաստատում ենթասահարական Աֆրիկայում, իսկ 5-ից գրեթե մեկը ուղևորվում է Եվրոպա:

ԱՐԵՎԱՅԻՆ ՋՐԱՏԱՔԱՑՈՒՑԻՉ

Ճգնաժամային կառավարման պետակադեմիայի գիտնականի առաջարկը

ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի դոցենտ Աշոտ Մելքոնյանը արտակարգ իրավիճակների համար արևային ջրատաքացուցիչի նոր սարք է նախագծել, որը մի շարք առավելություններ ունի:

Արևի էներգիայով ջուր տաքացնող սարքերը հերմետիկորեն փակ, թափանցիկ պատուհանով տարաներ են, որոնցում տեղադրված մետաղյա (հիմնականում պղնձյա) գալարաձև խողովակով դանդաղ հոսող ջուրը տաքանում է: Նման սարքերի հիմնական թերություններն են՝ մեծ զանգվածը, բարդ կառուցվածքը, համեմատաբար բարձր ինքնարժեքը, համեմատաբար փոքր օգտակար գործողության գործակիցը:

Աշոտ Մելքոնյանի առաջարկած մոդելի զանգվածը փոքր է, կառուցվածքը՝ պարզ, ինքնարժեքը՝ ցածր: Այս սարքն էլ երկու բաղկացուցիչ ունի՝ հերմետիկ բաք և ջուրը տաքացնող ջեռուցիչ: Տարբերությունն այն է, որ ջուրը տաքանում է ջրի մեջ տեղադրված լուսակլանիչ տարրի (ջեռուցիչ) տաքանալու արդյունքում: Ջեռուցիչը բարձր ջերմահաղորդականությամբ և լույսի կլանման մեծ գործակցով նյութ է, ամբողջությամբ գտնվում է ջրի մեջ և արևից ստացած ողջ էներգիան հաղորդում է ջրին: Այս սարքի օգտակար գործողության գործակիցը կարող է հասնել մինչև 80 տոկոսի: Ամռանը փորձարկումների ժամանակ 17 լիտր ջուրը 80 րոպեում 10 աստիճանից հասել է 52 աստիճանի: Իսկ աշնանը, երբ օդի ջերմաստիճանն առավելագույնը 13 աստիճան էր, 8 աստիճան ջերմաստիճանով ջուրը տաքացել է մինչև 36 աստիճան: Մայրամուտից հետո ջրի ջերմաստիճանը նվազում է, բայց դանդաղ: Օդի 6 աստիճան ջերմաստիճանի դեպքում սարքում ջրի ջերմաստիճանը 45 աստիճան էր:

Սարքի կիրառության ոլորտները բազմազան են, կարելի է պատրաստել ինչպես ստացիոնար, այնպես էլ շարժական ջրատաքացուցիչներ: Հասկանալի է, սարքի իրական հնարավորությունների ողջ օբյեկտիվ պատկերը ստանալու նպատակով անհրաժեշտ են նոր փորձարկումներ, սակայն նախնական փորձարկման արդյունքները հուսադրող են և վկայում են, որ սարքի արդյունավետությունը կասկած չի հարուցում:

Այս սարքը, հատկապես ճկուն տարբերակը, կիրառելի է արտակարգ իրավիճակներում ճամբարների կազմակերպման, դաշտային ելքերի, արշավների, ավանդական էներգակիրների բացակայության պայմաններում: Հայաստանում պարզկա օրերի վիճակագրությունը շատ նպաստավոր է սարքի օգտագործման արդյունավետության առումով: Սարքը էկոլոգիապես մաքուր է, կարող է օգտագործվել նաև բնակարանների ջեռուցման և կենցաղային տաք ջուր ստանալու նպատակներով: Ճկուն տարբերակի ինքնարժեքը մոտ 80 000 դրամ է, իսկ ստացիոնար կոշտ տարբերակինը՝ մոտ 120 000 դրամ:

Աշոտ Մելքոնյանի առաջարկած սարքին ծանոթ է արտակարգ իրավիճակների նախարար Դավիթ Տոնոյանը: Մինչ նախարարը դիպլոմներ էր հանձնում ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի շրջանավարտներին, քիչ հեռու տեղադրված սարքն աշխատում էր: Նախարարը տեսավ, ձեռքով փորձեց մոտ 50 աստիճանի հասած ջուրը: Ասաց, որ լավ միտք է ու կիրառելի արտակարգ իրավիճակներում: «911.Արտակարգ թերթը» պարբերաբար կներկայացնի այս հարցում զարգացումները: ■

Արամ ՁԱՔԱՐՅԱՆ
Լուսանկարները՝
Վահրամ ԱՎՈՅԱՆԻ

ՀՐԴԵՀԱՎՏԱՆԳ ԱՄԱՌ

Յուրացնել է պետք հրդեհային անվտանգության մշակույթը

Չոր խոտածածկի և գյուղմշակաբույսերի մնացորդների հրկիզումը դաշտերում մոտակա անտառային տարածքներում բռնկված հրդեհների հիմնական պատճառներից մեկն է: Թեև մշտապես ահազանգվում է այս մասին և բնակիչների հետ պարբերաբար իրազեկման աշխատանքներ են տարվում, բայց վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ անտառային չոր խոտածածկույթներում բռնկված հրդեհները մեծամասամբ մարդկանց անզգույշ վերաբերմունքի հետևանք են: Ինչպես մյուս մարզերում, Լոռիում նույնպես հրդեհների վերաբերյալ ահազանգեր սկսում են ստանալ ձնահալոցքից անմիջապես հետո, երբ հողագործները սկսում են կարգի բերել այգիները, պատրաստվել մշակման սեզոնին: Այս խնդիրն ամենևին չի հսկվում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, փաստացի չի գործում նաև «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթը, ըստ որի՝ արգելվում է այրել խոզանները, բուսական մնացորդներով ու չորացած բուսականությամբ տարածքները, արոտավայրերի ու խոտհարքերի բուսականությունը, գյուղատնտեսական, անտառամերձ, անտառային ու բնության հատուկ պահպանվող տարածքների հողերում: *«Գյուղացիները խոտն այրում են՝ իբրև առատ բերք ստանալու համար, քամուց էլ կրակը տարածվում է շրջակայքում: Մշտապես լրատվամիջոցներով, համայնքների ղեկավարների, բնակիչների հետ իրազեկման աշխատանքներ են տարվել, նույնիսկ հանգստյան գոտիներում համապատասխան ցուցապաստառներ կան, բայց մարդիկ շարունակում են կրակի հետ անփույթ վարվել, խարույկն առանց հանգցնելու հեռանալ տարածքից: Շատ հաճախ հրդեհավտանգ իրավիճակներում մեծ ազդեցություն են ունենում նաև եղանակային շոգ ու չոր պայմանները»,*- նշեց Լոռու մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Կարեն Հովհաննիսյանը: Նրա խոսքով՝ այս տարի Լոռու մարզում անտառային հրդեհների դեպքերն ավելացել են: Առաջին կիսամյակում անտառային հողերում գրանցվել է հրդեհի 33 դեպք, նախորդ տարի՝ 24, որի հետևանքով այրվել է մոտ 242,2 հա տարածք: Անտառներում բռնկված հրդեհները երբեմն նաև արժեքավոր ծառատեսակների ոչնչացման պատճառ են դառնում: Օրինակ, այս տարի կրակի բաժին են դարձել Լոռու անտառներին յուրահատուկ տեսք հաղորդող 115 եղևնի, ևս 255-ը ջերմահարվել է: Հրդեհից անմասն չեն մնացել նաև բուսածածկ տարածքները, որտեղ չորս տասնյակի հասնող հրդեհի ճարակ է դարձել 107 հա տարածք: Ըստ փ/ծ գնդապետի՝ անտառային հրդեհները շատ հաճախ լինում են դժվարամատչելի վայրերում, որտեղ հասնելու համար ստիպված են լինում անձնական մեքենաներով մոտենալ, կրակը հանգցնել ձեռքի տակ եղած միջոցներով, ինչը շատ է բարդացնում հրդեհաշիջումը: Այսօր անտառային տնտեսություններում արտակարգ իրավիճակային պայմաններին դիմակայելու համար անհրաժեշտ են ամենագնաց մեքենաներ, հրդեհների արագ արձագանքման սարքավորումներ:

Օրերս Գուգարքի հրշեջ-փրկարարական ջոկատի մեկ մարտական հաշվարկ՝ «Ռենո» մակնիշի ավտոմեքենայով մասնակցել է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Գուգարքի անտառտնտեսություն» մասնաճյուղում անցկացված «Անտառային հրդեհների կանխարգելում և օջախների վերացում» թեմայով արտապլանային հատուկ տակտիկական ուսումնավարժությանը:

Վարժանքին մասնակցել են նաև գյուղնախարարության, «Հայանտառի» «Գուգարքի անտառտնտեսության» ներկայացուցիչներ, Լոռու մարզպետարանի և տարբեր համայնքապետարանների աշխատակիցներ: Վարժանքն անցկացվել է երկու փուլով:

Առաջին փուլի ժամանակ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Վանաձորի մասնաճյուղում կազմակերպվել էր քննարկում անտառային հրդեհների ռիսկերի կառավարման թեմայով, այնուհետև լոռեցի հրշեջ-փրկարարները Գուգարքի անտառտնտեսության աշխատակիցների հետ իրականացրել են պայմանական անտառային հրդեհի հրդեհաշիջման աշխատանքներ Արջուտ համայնքի վարչական տարածքում:

Գործնական աշխատանքների ընթացքում օգտագործվել է նաև անօդաչու թռչող սարք (դրոն), որն իրականացրել է հրդեհի տարածքի օդային հետախուզություն:

Ուսումնավարժության արդյունքը գնահատվել է «բավարար», իսկ կազմակերպիչները մեկ անգամ ևս ընդգծել են, որ արդյունավետ համագործակցության ու անտառային հրդեհներին արձագանքման աշխատանքներում դեռևս անելիքներ կան: ■

Մերի ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

911 Արտակարգ թերթ
N 26 (674)
7-13 հուլիսի, 2017

Նվիրումն հայրենիքին

Կարևորը նվիրված ծառայությունն է համակարգին ու հայրենիքին: Մենք աշխատել ենք երեխաներին դաստիարակել նույնկերպ, որպեսզի սիրեն ու նվիրվեն իրենց ընտրած մասնագիտությանն ու հայրենիքին:

ՕՂԱԿԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ

Փրկարարական գործում՝ ամենալավը

Քաջիկ Բաբայանը Եղեգնաձորի հրշեջ-փրկարարական ջոկատի հին ծառայողներից է: Փ/ծ ավագը շատերի համար փորձառու ու կայացած փրկարարի լավագույն օրինակ է: Փրկարարական ծառայությունում աշխատանքի է անցել դեռևս 1998-ից, երբ 18 տարին նոր էր լրացել, բանակում ծառայելուց հետո կրկին վերադարձել է իր գործին: Այժմ Եղեգնաձորի ՀՓՋ-ի երրորդ հերթափոխի առաջին օղակի օղակի հրամանատարն է: Հրդեհի, ավտովթարի կամ այլ բարդ դեպքերի ժամանակ դասակի տղաները հենվում են նրա վրա՝ վստահ լինելով, որ հրամանատարը ցանկացած իրավիճակից դուրս գալու իր հմտությունն ունի: Եղեգնաձորի ՀՓՋ-ի հրամանատար, փ/ծ մայոր Սուրեն Հարությունյանը հպարտանում է իր ջոկատի անդամներով, բայց փորձառու փրկարարի կարևոր դերակատարման մասին չընդգծել չէր կարող.

«Երբ դեպքի վայրում նա է աշխատում, ես ավելի հանգիստ եմ, քանի որ իր անելիքը լավ գիտի: Նա «Արծագանք» ծրագրով վերապատրաստվելուց հետո եկել է և իր ստացած գիտելիքների շնորհիվ պատրաստել մյուս տղաներին: Որպես հին կադր, երիտասարդներին դեռ փոխանցելու շատ բան ունի»:

Քաջիկի մեջ փրկարարի համազգեստ կրելու ցանկությունն առաջացել է դեռ մանկության տարիներին, երբ ուշի-ուշով հետևում էր, թե ինչպես էին հրշեջները հանգցնում հարևանի տանը բռնկված հրդեհը: Դպրոցն ավարտելուց հետո անմիջապես իրագործեց վաղեմի ցանկությունը, ինչին դեմ չէին նաև ծնողները:

Ասում է՝ համեմատելի չեն 20 տարվա առաջվա փրկարար ծառայության որակն ու այսօրվանը: Համակարգում շատ բան է փոխվել. և՛ տեխնիկապես է հագեցվել, և՛ մասնագիտական կարողություններն են անհամեմատ բարելավվել: *«Նախկինում պարզապես հրշեջներ էինք, իսկ այսօր արդեն հրշեջ-փրկարարներ: Այն ժամանակ նման տեխնիկա չունեինք, հիմնականում ջրով, հազարից մեկ էլ փրփրահեղուկով, դրոշակներով էինք կրակը հանգցնում: «Արծագանք» ծրագրով «Լոռէ» փրկարարական ջոկատում վերապատրաստումը շատ բան է տվել մեզ, մինչ այդ չգիտեինք, թե ինչ է փրկարար ծառայությունը, կարևոր նրբություններին չէինք տիրապետում: Վերապատրաստվելուց հետո հրահանգչի որակավորում ստացա, սովորածս փոխանցեցի իմ դասակի տղաներին, որոնք քննություն հանձնելիս ամենաբարձր գնահատականները ստացան: Ամենալավն էինք»,-* անկեղծանում է օղակի հրամանատարը, որի համար գործի մեջ ամենակարևորը դեպքի վայր հինգ րոպե շուտ հասնելն է, քանի որ նույնիսկ ամենալավ փրկարարը չի կարող ոչինչ անել, եթե ժամանակին տեղ չի հասել: Երկու տասնյակ տարիների ընթացքում տարաբնույթ դեպքերի է արձագանքել, բայց ամենից շատ հիշողության մեջ մնացել է մի ավտովթարի դեպք, որը լավ ավարտ ունեցավ: *«Քեսաբից սիրիահայ հինգ հոգանոց ընտանիք հազիվ մազապուրծ հասել էր հայրենիք և տաքսիով ուղևորվում էր Արցախ բնակություն հաստատելու, բայց Եղեգնաձորում մեքենան գլորվում է և հայտնվում գարնան տեղումներից վարարած Արփա գետում: Այդ պահին ավելի քան պարտավորված էինք զգում անվնաս դուրս բերել պատերազմից հրաշքով փրկված ընտանիքի անդամներին: Բարեբախտաբար, վարորդը մեքենայի ապակիները բացել էր, և այն չէր հասցրել սուզվել: Դուրս բերեցինք ուղևորներին, իրերը և մեքենան: Այդ պահին վարարած գետը մեր փրկարարներից մեկին էր քշում-տանում, կարողացա նաև նրան դուրս բերել»,-* պատմում է Քաջիկ Բաբայանը և հավելում, որ այդ օրն իրենց համար մեծ տոն էր, հաջողվել էր սիրիահայ ընտանիքին փրկել, նույնիսկ կնոջ հետ եկեղեցի են գնացել և մոմ վառել նրանց փրկության համար:

Քաջիկ Բաբայանը 8 տարուց կանցնի վաստակած հանգստի: Վստահ է՝ իր կրտսեր գործընկերները լավ են տիապետում փրկարարական գործին:

Վերջերս արժանացել է «10 տարի անբասիր ծառայության համար» հուշամեդալի:

Հրամանատարն արմատներով Եղեգնաձորից է: Պատմում է, որ ամենահին ու ամենամեծ ազգի՝ Բաբեենց ցեղի ներկայացուցիչներից է: Իր նախնիները 1800-ականների վերջին Իրանի Սալմաստ քաղաքից էին եկել ու հաստատվել Վայոց ձորում, այն ժամանակ ամենաբարձր պաշտոնները էին զբաղեցնում: Այժմ Բաբեենց հետնորդը շարունակում է բարձր պահել ազգի պատիվը՝ իր գործի մեջ լավագույններից համարվելով: Երկու որդի և մեկ դուստր ունի: Ուրախությանը սահման չկա. Արցախում ծառայող որդին՝ Էրիկը, որը մեկ ամսից կզորացրվի, որոշել է շարունակել հոր գործը: Մտադիր է ընդունվել ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա և մասնագիտական կրթություն ստանալ: Ասում է՝ որդու որոշումը հանկարածակիի է բերել և ուրախացրել իրեն: Համոզված է, նրանով հպարտանալու դեռ բազմաթիվ առիթներ կունենա: Փրկարար ծառայությանը հավատարիմ ավագը խոստովանում է, երբեք իր համար կոչումները, տարբեր պատվոգրերը նշանակություն չեն ունեցել, ոչինչ չի չափվում արված գործով:

«Կարևորը նվիրված ծառայությունն է համակարգին ու հայրենիքին: Մենք աշխատել ենք երեխաներին դաստիարակել նույնկերպ, որպեսզի սիրեն ու նվիրվեն իրենց ընտրած մասնագիտությանն ու հայրենիքին»,- ասում է համերաշխ ընտանիքի հայրը, որի համար օրվա ամենսիրած պահը ընտանիքի անդամների՝ կնոջ՝ Սիլվայի, աղջկա՝ Էլենի և փոքր որդու՝ Գագիկի հետ մեկ սեղանի շուրջ հավաքվելն է: Շուտով Բաբայանների ընտանիքին կմիանա նաև իրենց զինվորը, ում անհամբերությամբ են սպասում բոլորը: ■

ԱՅՍ ԱՆԳԱՄ ԿԱՐԿՏԻՑ ՏՈՒԺԵԼ Է ՍԻՍԻԱՆԸ

Հունիսի 29-ին, ժամը 16:28 -ից մինչև 17:00-ը՝ մոտ 30 րոպե տեղացած խոշոր չափի կարկուտի, սրան ուղեկցող հորդառատ անձրևի և ուժեղ քամու հետևանքով արտակարգ իրավիճակ էր ստեղծվել Սիսիանի տարածաշրջանում:

Համայնքներից և ՀՀ ԱԻՆ մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնից ստացված հաղորդումների համաձայն՝ մեծ վնասներ են կրել աշնանացան և գարնանացան մշակաբույսերի հսկայական ցանքատարածքներ, հողին հավասարվել բանջարաբոստանային մշակաբույսերի սածիլները, տուժել են համայնքային ենթակառուցվածքները, սելավից հեղեղվել են բնակելի տների նկուղները, անասնագոմերը, հողի հաստ շերտով պատվել ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհները:

Սիսիանի քաղաքապետարանից տեղեկանում ենք, որ վնասվել է ցանքատարածությունների 60 տոկոսը, ինչպես նաև քաղաքի դեկորատիվ բուսականության գերակշիռ մասը: Կարկուտի և հորդառատ անձրևի հետևանքով, նախնական տվյալներով, վնաս է հասցվել մարզի 21 բնակավայրի (Սիսիան, Ախլաթյան, Աղիտու, Անգեղակոթ, Բալաք, Բռնակոթ, Գետաթաղ, Դարբաս, Լոր, Նորավան, Շաղաթ, Շաքի, Որոտան, Վաղատին, Տոլորս, Ույծ, Մուծք, Աշոտավան, Աղվանի, Տանձատափ, Լծեն):

Ահազանգերի հետքերով դեպքի վայր են մեկնել Սիսիանի ՀՓՋ-ից մեկ մարտական հաշվարկ և օպերատիվ խումբը՝ ՀՓՋ հրամանատար, փ/ծ մայոր Գարիկ Հովսեփյանի գլխավորությամբ:

«Երեք տասնյակից ավելի ահազանգեր ենք ստացել, մինչև ուշ երեկո արձագանքել դրանց: Սիսիանի փողոցներից մեկում սելավն ամբողջությամբ փլուզել էր գոմի տանիքը, բազմաբնակարան շենքերի վերջին հարկերը լցվել էին ջրով, նկուղները ծածկվել սարերից բերված հողի ու քարերի շերտակույտերով: Հրշեջ-փրկարարները բնակիչների հետ հավասար դույլերով դատարկել են նկուղների ու տների ջրերը, մեկնել Շաղատ, Բալաք, Անգեղակոթ գյուղեր, որտեղ հողին էին հավասարվել ցորենի ցանքսերն ու բանջարաբոստանային կուլտուրաները: Չի եղել մի այգի, մի հողակտոր, որ փրկված լինի կարկուտի ավերածություններից»- տեղեկացնում է Սիսիանի հրշեջ-փրկարարական ջոկատի հրամանատար Գարիկ Հովսեփյանը:

Աղետից անմիջապես հետո, պատճառված վնասներին ծանոթանալու համար քաղաքում շրջայց են կատարել նաև Սիսիանի համայնքի ղեկավար Արթուր Սարգսյանը և ԱԺ պատգամավոր Ավետ Սարգսյանը: Տեղում ստեղծվել են արագ արձագանքման խմբեր, նկուղները, քաղաքի փողոցները մաքրվել են ցեխից, լեռներից բերված հող ու խճաքարերի հսկայական շերտերից, որոշ աշխատանքներ էլ դեռ շարունակվում են: Սիսիանցիների խոսքով՝ նախադեպը չունեցող կարկուտ էր, և չեն հիշում, թե նման աղետալի վիճակ երբ էր եղել վերջին անգամ: *«Կատարված հաշվարկների համաձայն՝ վնասվել է բանջարաբոստանային կուլտարաների մոտ 80 տոկոսը, այգիների մոտ 60 տոկոսը, բազմաբնակարան շենքերի վերջին հարկերի բնակարանների շուրջ 30 տոկոսը, նկուղների 40 տոկոսը, իսկ առանձնատների նկուղերն ավելի քան 20 տոկոսի չափով վնաս են կրել: Սիսիանցիներին հասցված վնասները հաշվարկվել են և ներկայացվել Սյունիքի մարզպետարան»,-* փոխանցում են քաղաքապետարանից:

Նշենք, որ Սիսիանում հակակարկտային կայաններ չկան, և նշված համայնքները չեն հսկվում ՀՀ ԱԻՆ «Հիդրոմետ» ծառայության կողմից: Շուտով այս տարածաշրջանում նախատեսվում է հրթիռային պաշտպանության միջոցներ տեղադրել, որոնց կիրառման դեպքում հնարավոր կլինի տարածաշրջանը պաշտպանել կարկուտի հասցվելիք վնասներից: ■

էջը՝ Մերի ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

911 Արտակարգ թերթ
N 26 (674)
7-13 հուլիսի, 2017

Հերթափոխ

Աշխատանքը սկսվում է առավոտյան ժամը 9-ից մինչև 9:30-ը: Ընդունում են մեքենաները, տեխզինվածությունը, արձագանքման գույքը, պատրաստվում դասընթացներին՝ չորս փուլով 45 րոպե տևողությամբ, որից հետո օրվա ժամը 2-ին ճաշում են: Հետո ազատ ժամանակն է, որին էլ արդեն ցերեկվա 4-ն անց կեսին տնտեսական աշխատանքն է հաջորդում. նորոգում են գույքը, խափանված սարքավորումները:

ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԸՆՉՈՂ ՊԱՐԳԵՎ

Հերթափոխի կանգնած տղաների առօրյան

Լրագրողական նոթատերն ու ձայնագրիչը ուսիցս ճոճվող պայուսակի մեջ՝ մտա Արարատի մարզային փրկարարական վարչության Արտաշատի հրշեջ-փրկարարական ջոկատի (ՀՓՋ) թթենիների ստվերով ծածկված բակ: Ողջունեցի այդ պահին իրենց աշխատանքով զբաղված հրշեջ-փրկարարներին և շնորհավորեցի Սահմանադրության տոնի առթիվ: Հետո շենքի ձախ կողմի մետաղե աստիճաններով մի հարկ բարձրանալով հրամանատարական սենյակ՝ ներկայացա հրամանատարի տեղակալ, փ/ծ մայոր Լևոն Միրզոյանին, քանի որ հրամանատարը՝ փ/ծ փոխգնդապետ Արմեն Միքայելյանն արձակուրդում էր: Լրագրողի վկայականս ցույց տալուց հետո ասացի, որ՝ «911. Արտակարգ թերթն» ուզում է ներկայացնել այս պահին հերթափոխի կանգնած տղաների առօրյան:

* * *

Ոգևորությամբ փոխանցած առաջին տեղեկությունն այն էր, որ ԱԻ նախարար Դավիթ Տոնոյանն այցելել էր մարզ, ծանոթացել հրշեջ-փրկարարների աշխատանքին, որից հետո նրանցից երկարամյա ծառայողներին պարգևատրել՝ «10 տարի անբասիր ծառայություն» մեդալով: Որ Արտաշատի ՀՓՋ-ից միայն 22 հոգի արժանացել են այդ հպարտություն ներշնչող պարգևին, իսկ նրանցից 5-ը՝ խմբի պետ, փ/ծ լեյտենանտ Էդգար Սարգսյանը, օղակի հրամանատար, փ/ծ ենթասպա Մայիս Առաքելյանը, օղակի հրամանատար, փ/ծ ավագ Արթուր Գրիգորյանը այս պահին իրենց ծառայությունն են կատարում հրշեջ մասում:

Իսկ հուլիսի 5-ին՝ Սահմանադրության տոնական օրը, Արտաշատի ՀՓՋ երկրորդ հերթափոխն էր հերթապահություն իրականացնում: Քանի որ խմբի պետը վատառողջ էր, առաջին օղակի հրամանատար, փ/ծ ավագ Արթուր Գրիգորյանն էր ուղեկցում՝ ներկայացնելով խմբի առօրյան, որն ըստ հաստիքացուցակի բախկացած է 10 հրշեջ-փրկարարից: *«Այս պահի մարտական հաշվարկում 7 հոգի են, մյուսներն արձակուրդում են: Խումբը կազմված է երկու մարտական հաշվարկից՝ առաջին և երկրորդ օղակ, ամեն օղակ բաղկացած է հրամանատարից, վարորդից, ավագ հրշեջից, երկրորդ, երրորդ և չորրորդ համարի հրշեջներից»*:

Հերթափոխն սկսվում է առավոտյան ժամը 9-ից մինչև 9:30-ը: Ընդունում են մեքենաները, տեխզինվածությունը, արձագանքման գույքը, այնուհետև պատրաստվում են դասընթացներին՝ չորս փուլով 45 րոպե տևողությամբ, որից հետո օրվա ժամը 2-ին ճաշում են: Հետո ազատ ժամանակն է, որին էլ արդեն ցերեկվա 4-ն անց կեսին տնտեսական աշխատանքն է հաջորդում, այսինքն՝ նորոգում են գույքը, խափանված սարքավորումները, եթե այդպիսիք կան, կամ բակում որևէ անհրաժեշտ աշխատանք կատարում 30 րոպեների ընթացքում: Հետո անձնակազմի ինքնուրույն պատրաստվածության ժամանակն է գալիս, երբ ավելացնում են գիտելիքները՝ կրկնելով սովորածն ու իմացածը՝ ևս մեկ անգամ վերլուծելով դեպքերը մինչև ընթրիք: Իսկ հետընթրիքյան ժամերը՝ սկսած երեկոյան 8-ից, համեմատաբար հանդարտ են, այսինքն՝ թուլացել է առօրյա լարվածությունը: Կեսգիշերից մեկ ժամ առաջ էլ սկսվում է հանգիստը, բայց ինչպես իրենք են ասում՝ քնում են մեկ աչքը բաց, իսկ երկրորդ աչքը երկու ժամը մեկ փոխարինվող գիշերային հերթապահն է: *«Սա սահմանված ժամանակացույցն է՝ օրվա ռեժիմը, եթե արտակարգ դեպքեր չկան, իսկ երբ հրդեհ կամ մեկ այլ պատահար է լինում, ամեն ինչ թողած՝ շտապում ենք կանչի հետքերով»,-* ասում է օղակի հրամանատարը:

Փ/ծ ավագ Արթուր Գրիգորյանը փրկարար ծառայության համակարգում է 2006-ից, ինչպես ինքն է ոգևորված նշում՝ փրկարարի ուղին սկսել է Երևանից՝ կարևորագույն օբյեկտների պահպանությունից: Իսկ 2014-ին տեղափոխվել է հարազատ Արտաշատի ՀՓՋ: Հիշում է շատ դեպքեր՝ մեծ ու փոքր ծավալի հրդեհներ, դժբախտ պատահարներ՝ երբեմն էլ ողբերգական ավարտով: Խոսրովի անտառն էլ չի կարողանում շրջանցել, երբ ռուս զբոսաշրջիկ էր կորել, որին որոնում էին 12 ժամ և գիշերով բարձրացել ու հասել էին սարի գագաթը, որտեղից լույսերի մեջ երևում էր Երևանը: Զվարճալի դեպքերն էլ քիչ չեն իրենց աշխատանքում, ցավոք, ողբերգականն էլ. *«Մի կին զանգահարել էր գիշերվա 11-ի մոտերը, թե դիմացի շենքից բատարեյով լույս են գցում մեր պատուհանին: Իսկ ծանր դեպք, որ տպավորել է, երկու տարի առաջ Արտաշատում տեղի ունեցած շտապօգնության մեքենայի վթարն էր, երբ բժիշկը մահացավ»*:

Իսկ երկրորդ օղակի հրամանատար, փ/ծ ենթասպա Մայիս Առաքելյանը ծառայության մեջ է 2002-ից: Ժպիտով նշում է, որ ջոկատի միակ ենթասպան ինքն է, այդպիսի հաստիք չկա, որովհետև այդ կոչումով է տեղափոխվել Արտաշատի ՀՓՋ: Մինչ այդ Արարատի մարզի փրկարարական ջոկատում էր օղակի հրամանատար՝ դարձյալ ենթասպայի ուսադիրներով: Շատ դեպքեր է հիշում փ/ծ ենթասպան, բոլորն էլ տպավորել են ու իրենց հետքը թողել, սակայն հիշողության մեջ դեռ շարունակվում են հատկապես այն ողբերգական պատահարները, որոնք ավարտվում էին երեխաների մահով: Երբ օրերով ջրանցքներում որոնում էին դեռ նոր կյանք մտած այդ անմեղ էակների մարմինները: Իսկ հրշեջ-փրկարարի ծառայության մեջ, նշում է, որ երբ մարտական հաշվարկը հասնում է դեպքի վայր, օղակի հրամանատարը, խմբի պետի հետ, անմիջապես անցնում է հետախուզման, զննում է հրդեհի տեղանքը, կազմակերպում հրդեհաշիջման աշխատանքը. *«Բայց հրդեհը մարելու ժամանակ բոլորս հավասար ենք մեր գործողություններում, պարզապես հրամանատարները, ինչպես ամեն տեղ, մի քիչ ավելին են անում»*:

Ավագ հրշեջ-լեռնափրկարար, փ/ծ ավագ սերժանտ Հովիկ Բաբայանը ջոկատում է 1999-ից: Պատմում է՝ հիշելով բազմաթիվ դեպքեր, որոնց ականատես ու հետևանքների վերացնողն է եղել: Իակ դրանք այնքան շատ են, որ մի դեպքի նկարագրությունը դեռ չավարտած, վերջին չհասած՝ անցնում է մյուս դեպքին: Հատկապես հիշում է դժվար, երբեմն էլ ողբերգական դեպքերը, որոնք հիմնականում ճանապարհատրանսպորտային պատահարներն են, և պատմելիս էլ զգացվում է, որ մինչև հիմա հանգիստ չեն տալիս, թրթռում են հիշողության մեջ: Ասում է, որ արդեն սովորել են այս կենսակերպին, որքան էլ դժվար, բայց հարազատ է դարձել. *«Մի օր գալիս ենք աշխատանքի, մնացած երեք օրն անկախ մեզնից սպասում, պատրաստվում ենք, որ նորից պիտի գանք»*: Փ/ծ ավագ սերժանտն այդ երեք օրերին զբաղվում է գյուղատնտեսությամբ: Սեփականաշնորհված հող ունի, այգի, արդեն հասցրել է ծիրանի բերքը հավաքել, սպասում է խաղողաքաղին:

Վարորդ, փ/ծ սերժանտ Սամվել Գրիգորյանը ծառայությունը սկսել է Արտաշատի ՀՓՋ-ում 2003-ից և իր հարազատ ջոկատում էլ ուզում է ավարտել, երբ ժամանակը գա, այլ տեղ գնալու միտք չունի: Հենց նրա աշխատանքից է կախված՝ երբ և ինչպես տեղ կհասնի մարտական հաշվարկը: Նկատում է, եթե իրեն՝ հատուկ նշանակության մեքենայի վարորդին թույլատրվում է կարմիր լույսի տակով անցնել, դա դեռ չի նշանակում, որ պետք է կարգ խանգարի, ինքը նույնպես պարտավոր է ճանապարհային կանոնները պահպանել: Իսկ ամենակարևորը զգույշ լինելն է, բայց նաև ժամանակին տեղ հասնելը. *«Մեքենան միշտ պետք է լինի պատրաստ վիճակում: Իսկ դեպքի վայր հասնելուն պես նախ մեքենան եմ կայանում անվտանգ տեղ, որ հրդեհը չմոտենա, իսկ հրդեհաշիջման ժամանակ ջուր եմ տալիս, եթե անհրաժեշտ է՝ նաև փրփուր և ամբողջ ընթացքում հետևում անխափան մատակարարմանը»*:

Իսկ Արարատի մարզային փրկարարական վարչության Արտաշատի հրշեջ-փրկարարական ջոկատի (ՀՓՋ) հրամանատարի տեղակալ, փ/ծ մայոր Լևոն Միրզոյանը ջոկատի երկրորդ խմբի, ինչպես նաև մյուս խմբերի հրշեջ-փրկարարների մասին խոսում է զուսպ գովեստով, գոհ է նրանց աշխատանքից և մարդկային կերպարից: Աշխատանքում հարաբերությունները գործնական են ու ընկերական, իսկ աշխատանքից դուրս՝ միայն ընկերական. *«Իրար մեջք մեջքի, ուս ուսի տված՝ մեր ծառայությունն իրականացնում ենք: Դեռ չի եղել մի դեպք, որ տղաները հանկած թերանան»*: ■

Ֆելիքս ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ-ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ ՃԿՊԱ-ՈՒՄ

ՃԿՊԱ միջին մասնագիտական կրթական ծրագրի «Հրդեհային պաշտպանություն» և «Կառավարումն արտակարգ իրավիճակներում» երկրորդ կուրսի ուսանողները արտադրական պրակտիկայի շրջանակներում հունիսի 30-ին մասնակցեցին մարզական-մասնագիտական միջոցառման: Արտադրական պրակտիկայի ծրագրի քննարկման ժամանակ փրկարարական ամբիոնում որոշվեց կազմակերպել մարզական միջոցառում: Միջոցառման կազմակերպիչներ՝ փրկարարական ֆակուլտետի դասախոսներ, փ/ծ մայոր Հարություն Ղազարյանը և փ/ծ մայոր Հայկ Ղազարյանը ծրագրում ներառել էին արագաշարժության, հավասարակշռության, որոշակի անկանխատեսելի իրավիճակներում արագ կողմնորոշման ունակության զարգացման, ուժային և ճկունության ուղղվածության, ինչպես նաև որոշակի մասնագիտական հմտությունների ձևավորման վարժություններ: Մասնակցում էին 4 թիմ, որոնցից 3-ը գրավեցին մրցանակային տեղեր:

Միջոցառման կազմակերպիչների խոսքով՝ միջոցառման հիմնական նպատակը թիմային մտածողության ձևավորումն է, ինչպես նաև այն գիտակցությանը հասնելը, որ թիմում չկան ուժեղներ և թույլեր, այլ կա թիմ, որն ունի նպատակ և այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է գործել ողջ թիմով՝ լրացնելով միմյանց: ■

911 Արտակարգ թերթ
N 26 (674)
7-13 հուլիսի, 2017

Երբ արևի մազերը դեռ լճի մեջ են

Եվ ճչում է լուսաբացը աքլորականչի նման,
Զրնգոցով կարմրում են սարերը գյուղի:
Նախրի հետքը ծորում նկարում է նոր կածան,
Երդիկները ծուխ են երկնքից մանում,
Քարափի գլխից ձայնը հովվի
Ընկնում է գյուղը ծվեն-ծվեն...
Իսկ թաց արևից դեռ շաղ է կաթում:

ՍԵՐԽԱՋ

ՍԵՐԽԱՋԻ ԱՐՎԵՍՏԱՆՈՑՈՒՄ

Ապրումակցող մարդկանց զրույց

Ընտանեկան արվեստանոցում հորովելի շունչ կա. ներդաշնակ, խաղաղ համակեցություն է: Փոքր տարածքում երկար տարիներ կողք կողքի ստեղծագործել են հայր ու որդիներ: Հիմա արդեն ավագը՝ Ավետիս Խաչատրյանը, առանձին արվեստանոց ունի: Աբգարը ներսի սենյակից բերում, դասավորում է հոր՝ Սերգեյ Խաչատրյանի վերջին գործերը. կանայք, գյուղ, աղջիկ տեսնելու տեսարան, արոտավայրեր, կլորիկ արևոտ սարեր: Ներս է մտնում ինքը՝ Սերխաչը՝ Սերգեյ Խաչատրյանը: Ջերմ, անմիջական շփում է սկսվում:



- Ուրիշ որտե՞ղ ես տեսել էսպիսի լեռներ,- հարցնում է,- աշխարհում ոչ մի տեղ նման բան չես տեսնի: Մեր Վարդենիկի սարերը բոլորն էսպիսին են: Հավանաբար, սրանք հին լեռներ են. հողով ծածկվել են, էլ էն քարերը, ժայռերը չկան:

- Սարյանական շունչ կա այս գործերում,- ասում եմ,- հո չե՞ք նեղանում, վարպե՛տ:

- Եթե ինձ համեմատում ես Սարյանի հետ՝ ես հպարտ եմ,- ասում է:

Հետո Աբգարը բացատրում է, որ իմաստով այդ երկուսը տարբեր են, որ «սարյանական» ասելով՝ մասնագետները նկատի ունեն խոր ազգայինը: Չեմ վիճում: Միևնույն է՝ այդ պահին ինձ համար չկա ավելի ազգային բան, քան այդ կտավների բնաշխարհն է:

Պատանեկությունից մայրաքաղաք տեղափոխված նկարչին այդպես էլ չի լքել հայրենի Զոլաքարի կարոտը: Երիտասարդ տարիքից այն արտահայտվել է թե՛ վրձնով, թե՛ գրչով: Երկրորդի մասին մի տեսակ ամաչելով է խոսում Սերխաչը: Սկզբում մի հայտնի հրատարակիչ չի ընդունել իր բանաստեղծությունները: Տարիներ անց այդ նույն մարդը հորդորել է գրքի վերածել դրանք՝ ասելով, որ նա ավելի շատ բանաստեղծ է, քան՝ նկարիչ: Գյուղական տեսարանները նույն խտությունն ունեն Սերխաչի գրչում և գույներում: Կենդանի, շնչող պատկերներ են դրանք:

Աբգարը ներսից բերում է ոճով խիստ տարբերվող այլ գործեր ևս. Սերխաչի գլուխը՝ վիուկի ոտքի տակ, սերվանտեսյան մոտիվներ:

Հարցնում եմ՝ քո՞նն են: Ասում է՝ չէ, հայրիկինն են: Այդքա՜ն տարբեր... Համաձայնում է, ասում է՝ հայրն ամեն ոճի կտավ ունի՝ աբստրակտից մինչև մոդեռնիստական գործեր:

Նկարչի կտրված գլուխը խորհրդային տարիներին ճնշված ազատությունն է, որ 60-ականներին իր մաշկի վրա է զգացել պատանի Սերգեյը: Այդ շրջանի մասին չի սիրում խոսել: Ինչ էլ ասում է՝ հրապարակման ենթակա չէ: Իսկ Դոն Կիխոտի շարքին հատուկ վերաբերմունք ունի:

- Ա՛յ մարդ, ամեն անգամ տեսնելիս ասում եմ՝ ինչի՞ մեր Նազարին ոչ ոք չի նկարում:

- Ո՞վ պիտի նկարի, եթե ոչ՝ Դուք,- հարցնում եմ:

- Դա էլ ես ճիշտ ասում (ծիծաղում է): Սերվանտես ենք նկարում, բայց մեր Նազարն ավելի լավն ա, է՜:

Սերգեյ Խաչատրյանը միշտ է նկարել: Բայց դա եղել է հիմնական աշխատանքին զուգահեռ: Ասում է՝ խորհրդային տարիներին ոչ ոք չէր պատկերացնի, որ կարելի է նկար վաճառել ու ապրել:

Երկրի անկախության հետ ծնվում է նաև «Վերնիսաժ» երևույթը: Մի օր կինը հորդորում է վերցնել նկարներն ու գնալ այնտեղ: Նկարներն էլ՝ թղթի վրայի գրաֆիկաներ: 10-15 հատ դասավորում է թղթապանակում, գնում «Վերնիսաժ», նկարիչների արանքում մի փոքրիկ տեղ գտնում, դնում գետնին ու կանգնում: Շատ շուտով մի ամերիկահայ է մոտենում, զննում թղթապանակի նկարներն ու թարգմանչի միջոցով գին հարցնում: 180 ռուբլի՝ միանգամից մի ամսվա աշխատավարձ է ասում Սերգեյը: Ու հրաժարվում է դոլար վերցնել: Թարգմանիչը տեղում փոխանակում է գումարն ու նկարչին տալիս պահանջված գումարը՝ ռուբլով: Սա Սերխաչի առաջին վաստակն էր՝ սիրած զբաղմունքից:

Հիմա արդեն իր և որդիների նկարների շնորհիվ ընտանիքը չորս բնակարան ունի և երկու արվեստանոց: Բնակարաններից միայն մեկն է Երևանի Մետրոպոլիտենում աշխատելու շնորհիվ ստացել: Ստացել է ու անմիջապես հեռացել աշխատանքից: Եվ այլևս ոչինչ չէր կարող նրան շեղել արվեստից: Իհարկե, երեք զավակների կարիքների համար նկարում էր նաև կոմերցիոն գործեր:

- Հիմա արդեն՝ չէ: Աբգարս ասում է՝ ինչ ուզում ես՝ նկարիր: Բայց մեկ-մեկ էլ հուշում է (ծիծաղում է): Ասում է՝ քեզ մոտ գյուղական թեման լավ է ստացվում:

- Պապան ամեն ինչ նկարում է: Բայց ես զգում եմ, որ ամենալավը գյուղն է, որտեղ ինքն է՝ իր մանկությունը, որ դաջված է հոգու մեջ,- Աբգարը շարունակում է մանրակրկիտ ներկայացնել հոր արվեստը:- Նաև նկարչի տարբերակման համար են լավ այդ վերհուշերը՝ սար, քար, հանդապահ, խոտհարք, վրաններ, ճանապարհը ոնց էր գնում, գետը ոնց էր գալիս, տատիկը գնացել էր տղայի համար աղջիկ տեսնելու... Հետաքրքիր են:

Հարցնում եմ՝ մեծ կտավներ կա՞ն արդյոք: Ասում է՝ կան, բայց՝ քիչ: Տարածքը փոքր է նման գործերի համար:

- Առաջ, երբ արվեստանոցում մենակ էի, բավարարում էր: Հետո տղաներիցս երկուսը նկարիչ դարձան՝ «անկախ ինձնից»,- Սերխաչն ինքն էլ է ծիծաղում ասածի վրա, հետո բացատրում ասելիքը,- ես չէի ուզում՝ իրենք նկարիչ լինեն: Գաղտնի նկարում էին: Ինձ մնում էր օգնել նրանց:

- Երկուսից ո՞րն է ավելի հաջողված,- հարցնում եմ, չնայած գիտեմ, որ Ավետիսի մասին շատ է խոսվում արվեստագետների շրջանակում:

- Վա՜յ, Ավիկս: Մեծ արվեստագետներից շատերը կուզենային երեխայի տրամաբանություն ունենալ. դա դժվար բան է: Ավիկս չքնաղ երեխա է: Կերպարները հեքիաթային են. ոտաբոբիկ, կարճ ձեռքերով, աչքը՝ վերև...

Աբգարը պատմում է, թե ինչպես տարիներ առաջ «Պյոտր Ֆոմենկոյի արվեստանոց» հայտնի մոսկովյան թատրոնի տնօրեն Անդրեյ Վորոբյովը նկատեց եղբորը՝ Ավետիսին ու Մոսկվայում երկու անգամ շքեղ ցուցահանդեսներ կազմակերպեց:

- Ինչո՞ւ ոչ մի բառ քեզանից չես խոսում,- ուզում եմ, որ այդ զուսպ, խաղաղ ձայնով տղան իր մասին էլ պատմի:

- Դե, ես գոհացած չեմ ինձնով: Իմ թերություններն ավելի շատ եմ զգում, քան՝ հաջողությունները: Գոհությունը պահի տակ է լինում, հետո զգում եմ, որ սա էլ է թերի, սա էլ պիտի շարունակություն ունենա: Հետո, ինձ մոտ էքսպերիմենտալ է. անընդհատ փորձում եմ ինչ-որ մի նոր բան, հետո էդ նոր բանը համադրում եմ մյուսին, որ գտել էի...

- Աբգարս ակադեմիկ է,- միջամտում է Սերխաչը:- Նկարչության մեջ գաղտնիք չկա, որ չիմանա: Եվ ձեռքն է լավը: Բայց դեռ փնտրում է: Ինձ թվում է՝ իրեն պատեպատ է խփում. մի ոճում փորձում է իրեն, մի շարք անում, հետո անցնում մյուսին:

- Բայց մի ոճի մեջ մի քանի շարքը բավական չէ՞ նկարչին: Թող անցնի ուրիշին: Բա հո չի՞ լճանալու,- չգիտես ինչու՝ պաշտպանում եմ Աբգարին: Համաձայնում են ու բարեհոգի ծիծաղում հայր ու որդի:

Արվեստանոց է մտնում պայծառ, ծիծաղկոտ Ավետիսը, ծանոթանում և միանգամից աշխուժացնում մեղմ մթնոլորտը: Զանազան ուրախ պատմություններ է պատմում: Հետո ցույց տալիս Աբգարի աշխատանքները: Ապշեցուցիչ գործեր են՝ կոլաժներ, օֆորտ, մտահորիզոնը՝ ծով: Եվ այս տղան դժգոհ է իրենից: Ինչ լավ է՝ եկավ Ավիկը. Գուցե այդպես էլ չիմանայի, թե ինչերի է ունակ այդ համեստագույն երիտասարդը:

Հետո պատմում են տան կրտսեր տղայի՝ «հռետորի» մասին, որ Իսրայելում դոկտորական է պաշտպանում՝ մշակութաբանության ոլորտում:

Մինչ խոսում ենք, Աբգարը մի հին ճամպրուկ է բերում, միջից ձեռագործ տիկնիկներ է հանում ու դասավորում ճամպրուկի փեղկերին: Մոր՝ տան «դիրիժորի», հոր թևութիկունքի աշխատանքներն են. կյանքի վերջին մի քանի ամիս զբաղվում էր տիկնիկագործությամբ:

Մի ողջ կյանքի հիշողությունները մանում են միմյանց ապրումակցող մարդկանց զրույցի թելը՝ թեթևացնելով ճամպրուկից տարածվող թավշե թախիծը:

Սեր ու գնահատանք կա այս 45 քմ հարկի տակ: Այստեղ Մարդն արժեք է ու իր առաքելությունն ունի կյանքում: ■

ԺԱՆՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

911
Արտակարգ թերթ
N 26 (674)
7-13 հուլիսի, 2017

Կյանք
Արժեք ունեն միայն այն մտքերը, որոնցով մենք ապրում ենք:
Հերման ՀԵՍՍԵ

ՊԱՀԱՆՁՎԱԾ ԵՎ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ

Հունիսի 30-ին կրկնակի տոնական մթնոլորտ էր ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունում. ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի 184 շրջանավարտ (25 տոկոսը՝ աղջիկ) դիպլոմ էր ստանում, իսկ նախարարության 42 աշխատակից՝ պարգև «Անբասիր ծառայության համար» առաջին, երկրորդ և երրորդ աստիճանի մեդալ:

«Այսօր զուգակցվում է երկու խորհրդանշական իրադարձություն՝ խրախուսվում են տարիների վաստակ ունեցող փրկարար ծառայողներն ու դիպլոմներ են հանձնվում նրանց փոխարինելու պատրաստ՝ արտակարգ իրավիճակների նախարարության ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի շրջանավարտներին: Վաստակաշատ փրկարարները լավագույն օրինակն են, ում կարող է հետևել երիտասարդ սերունդը՝ ընտրելով ամենապահանջված մասնագիտություններից մեկը», - միջոցառման ժամանակ հայտարարեց արտակարգ իրավիճակների նախարար Դավիթ Տոնոյանը: *«Փրկարարն ամենամարդասիրական մասնագիտությունն է»,*- շնորհավորելով շրջանավարտներին՝ ասաց Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի ռեկտոր Համլետ Մաթևոսյանը:

Շրջանավարտներին դիպլոմները հանձնեցին Փրկարար ծառայության և Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի ղեկավարները, ակադեմիան գերազանցությամբ ավարտած 19 շրջանավարտի՝ ԱԻ նախարարը: Գերազանցիկներից 14-ը գեղեցիկ սեռի ներկայացուցիչ է:

Շրջանավարտները երդվեցին. «Ստանալով արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտում մասնագետի բարձր կոչումը և անցնելով փրկարարի համամարդկային գործունեության.

Երդվում եմ՝

բարեխղճորեն և պատասխանատվությամբ կատարել մասնագիտական պարտականություններս,

անշահախնդրորեն կազմակերպել տուժածների փրկման աշխատանքները՝ անկախ ազգությունից, քաղաքական հայացքներից, կրոնական դավանանքից,

հնարավորինս ամեն ինչ անել աղետների կանխման և կանխարգելման համար,

ամբողջ ուժով օժանդակել ԱԻՆ համակարգի զարգացմանը,

պահպանել փրկարարի մասնագիտական ավանդույթը, բարոյական նկարագիրը և բարձր պատիվը:

Երդվում եմ ողջ կյանքում հավատարիմ մնալ այս երդմանը»: ■

Արամ ՁԱՔԱՐՅԱՆ
Լուսանկարները՝
Վահրամ ԱՎՈՅԱՆԻ

Լանդշաֆտաէկոլոգիական հետազոտություն

Ուղղություններն ու կիրառական լանդշաֆտագիտության հեռանկարային խնդիրները

Լեռնային անկայուն և համեմատաբար խոցելի երկրահամակարգերի պահպանման, արտադրական ներուժի արդյունավետ օգտագործման, բնօգտագործման ձևերի տարածքային պլանավորման և կառավարման խնդիրներն արդի հասարակության կարևոր հիմնահարցերից են ու պատահական չէ, որ վերջին տարիներին ակտիվացել ու շատացել են լեռնային տարածաշրջանների բնատեխնածին երկրահամակարգերի ուսումնասիրությունները: Հայաստանի նման լեռնային երկրներում երկրահամակարգերի համալիր աշխարհագրական հետազոտությունները պետք է հիմնվեն լանդշաֆտաէկոլոգիական փորձաքննության վրա: Միայն այս դեպքում հնարավոր կլինի ճշգրիտ համադրել բնապահպանությունն ու բնօգտագործումը:

Հանրապետությունում տարվող լանդշաֆտային հետազոտություններում ուրվագծվում է չորս հիմնական ուղղություն. Հայաստանի բնատարածքի դինամիկայի աշխարհագրական կանխատեսում և քարտեզագրում, լեռնային բնատեխնածին երկրահամակարգերի տնտեսական անվտանգ (առանց ռիսկերի) օգտագործում և կառավարում, Հայաստանի ֆիզիկաաշխարհագրական առանձին շրջանների լեռնային երկրահամակարգերի անթրոպոգեն փոփոխությունների և դրանց գեոէկոլոգիական առանձնահատկությունների համալիր գնահատում, գլոբալ կլիմայափոխության արդի պայմաններում լեռնային երկրահամակարգերի դեգրադացիայի և անապատացման հիմնախնդիրներ, լեռնային բնաանթրոպոգեն երկրահամակարգերի տարածքային կազմակերպում և լանդշաֆտային պլանավորում:

Այս հետազոտություններն այսօր միտված են ռացիոնալ բնօգտագործմանն ու բնապահպանությանն առնչվող հետևյալ գիտագործնական հիմնախնդիրների լուծմանը. լեռնային բնատեխնածին գեոհամակարգերի դինամիկայի կանխատեսում, բնօգտագործման բնական և մարդածին ռիսկերի գնահատում-կառավարում, կլիմայի գլոբալ փոփոխության պայմաններում բնական գեոհամակարգերի անապատացում ու լանդշաֆտների դեգրադացիա, լեռնային գեոհամակարգերի լանդշաֆտառեկրեացիոն ներուժի գնահատում, հանգստի ու զբոսաշրջության կազմակերպման նպատակով դրանց ռացիոնալ օգտագործում, բնօգտագործման էկոլոգիապես հիմնավորված ձևերի կազմակերպում և լանդշաֆտային պլանավորում և այլն:

Հայաստանի լեռնային երկրահամակարգերի լանդշաֆտային կիրառական հետազոտությունները պետք է լուծեն հետևյալ խնդիրները.

1. լեռնային երկրահամակարգերի ֆունկցիոնալ գործունեության ու զարգացման օրենքների և օրինաչափությունների բացահայտում,
2. լեռնային լանդշաֆտների ֆունկցիոնալ գործունեության մոդելացման ուղղությամբ հետազոտությունների ծավալում,
3. լեռնային լանդշաֆտների կենսաբանական արդյունավետության և բնակչության տնտեսական գործունեության փոխազդեցության ռացիոնալ սկզբունքների մշակում,
4. բնության պահպանության գիտականորեն հիմնավորված ձևերի կազմակերպում,
5. տեխնածին և խիստ խախտված լանդշաֆտների վերակուլտիվացում,
6. սոցիալ-տնտեսական, ռազմական, էկոլոգիական և այլ ազգային ու տարածաշրջանային ծրագրերի մշակման ու իրականացման ընթացքում լեռնային լանդշաֆտների բնաարտադրական յուրահատկությունների հաշվառում,

7. լանդշաֆտների վրա մարդածին ներգործության տարբեր ձևերի գնահատման մեթոդաբանության մշակում,
8. լանդշաֆտագիտական կրթությանն ուղղված ուսումնական պլանների մշակում,
9. ազգային լանդշաֆտային քաղաքականության կառավարումն իրականացնելու գիտամեթոդական ուղեցույցների մշակում,
10. լանդշաֆտային պլանավորման և կառավարման տեսության և մեթոդաբանության զարգացում:

Սրանք են այն կառուցողական հիմնախնդիրները, որոնք մոտ ապագայում պետք է կանխորոշեն ՀՀ լեռնային երկրահամակարգերի լանդշաֆտային հետազոտությունների ուղղություններն ու միտումները: ■

Հրապարակումը պատրաստվել է Ներսես Սամվելյանի «Լեռնային երկրահամակարգերի լանդշաֆտային հետազոտությունների ուղղություններն ու կիրառական լանդշաֆտագիտության հեռանկարային խնդիրները Հայաստանի Հանրապետությունում» զեկույցի հիման վրա: Զեկույցը ներկայացվել է ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի 25-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովին:

911 Արտակարգ թերթ
N 26 (674)
7-13 հուլիսի, 2017

Մարդը կար և չկա

Երբեք անկեղծ մի եղեք կեղծ, երեկերեսանի մարդկանց հետ. նրանք ոչ միայն չեն հասկանա ու չեն գնահատի, այլև ձեզ «կչափեն» իրենցով՝ պարզապես չեն հավատա, քանզի իրենք երբեք անկեղծ չեն:

Օգնում են փրկարարները

Թռչուններ՝ խոհանոցի լվացարանի տակ

Անցած յոթ օրում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության ստորաբաժանումները արտակարգ իրավիճակների վերաբերյալ ավելի քան 500 ահազանգի են արձագանքել: Շատ դեպքերում փրկարարները դեպքի վայր մեկնելուն զուգահեռ տեղեկությունը փոխանցել են այլ ծառայության. շտապօգնություն, «Վեոլիա-ջուր», էլցանց, գազի վթարային ծառայություն, կանաչապատման, սանմաքրման ծառայություն, ոստիկանություն և այլն:

Գրանցվել է մոտ 130 հրդեհ. այրվել են տան գույք, շինությունների փայտյա կառուցատարրեր, շինանյութ, անասնակեր, բուսածածկ տարածքներ, ջերմահարվել են պտղատու և դեկորատիվ ծառեր: Փակ դուռ բացելու վերաբերյալ էլ 130 կանչ է ստացվել: Վատառողջ, ծանրաքաշ, սակավաշարժ քաղաքացուն բնակարանից իջեցնելու կամ բնակարանում տեղից տեղ տեղափոխելու կանչեր են սպասարկել Երևանի Աջափնյակ, Նոր Նորք, Քանաքեռ-Զեյթուն, Մալաթիա-Սեբաստիա, Ավան, Կենտրոն, Արաբկիր, Դավիթաշեն վարչական շրջանների և Լոռու ու Տավուշի փրկարարները: Տարբեր վայրերում արգելափակված (դիտահոր, վերելակի հորան, նկուղ, շենքի օդատար-ծխատար, մեքենայի շարժիչի տակ և այլն) մի շարք կենդանիներ են ազատվել: 30 օձ է հայտնաբերվել և տեղափոխվել անվտանգ տարածք: Գետերի և ջրամբարների ափերին արգելափակված մեքենաներն են դուրս բերվել երթևեկելի հատված: Բարձր ջերմաստիճանով պայմանավորված՝ հաճախակիացել են բուսածածկ տարածքների հրդեհները: Այս շաբաթ ամենախոշոր հրդեհները գրանցվել են Սյունիքում և Լոռիում՝ յուրաքանչյուրը՝ մոտ 30 հեկտար: Ավելի քան մեկ հեկտար մակերեսով բուսածածկ տարածքների հրդեհներ են գրանցվել նաև Շիրակում, Գեղարքունիքում, այլ մարզերում:

Այլ կանչեր. Աջափնյակի փրկարարներն ահազանգ են ստացել, թե Արգումանյան փողոցի բնակարաններից մեկում խոհանոցի լվացարանի տակ թռչունի ձագեր են արգելափակվել: Հրշեջ-փրկարարները դուրս են բերել թռչուններին և տեղափոխել անվտանգ տարածք: Կենտրոնի փրկարարներն ահազանգ են ստացել, թե Խանջյան փողոցի շենքերից մեկի մոտ կասկածելի պայուսակ կա: Փրկարարները բացել են պայուսակը, կասկածելի իր չի հայտնաբերվել: Արաբկիրի փրկարարներն ահազանգ են ստացել, թե Արաբկիրի 51-րդ փողոցում երեխան բարձրացել է շենքի 2-րդ հարկի պատշգամբ և չի կարողանում իջնել: Հրշեջ-փրկարարները 12-ամյա տղային իջեցրել են պատշգամբից: Շենգավիթի փրկարարներն ահազանգ են ստացել, թե «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոնի հիվանդներից մեկի մատից մատանին հանելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: Հրշեջ-փրկարարները մատանին հանել են 12-ամյա տղայի մատից: Գեղարքունիքի փրկարարներն ահազանգ են ստացել, թե Սևանա լճում՝ Լճաշեն գյուղի լճափնյա տարածքում ջրի մեջ նռնակ կա: Ջրափրկարարները հայտնաբերել են F1 տիպի նռնակ, դուրս բերել ջրից և հանձնել ոստիկաններին: Արմավիրի փրկարարները Ջանֆիդա և Ջրառատ գյուղերում ընկած վիրավոր արագիլներին տեղափոխել են Արմավիր քաղաքի կենդանաբանական այգի: ■

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ
www.cmsa.am

Հասցե. Երևան, Ավան, Աճառյան 1
Հեռ. (060) 69-10-01 (ռեկտոր)
(060) 69-10-03, (060) 69-10-05
(060) 69-10-06, (060) 69-10-13

ԱԿԱԴԵՄԻԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է 2017-2018 ՈՒՍՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Ակադեմիան իրականացնում է.
1. ***բակալավրի կրթական ծրագիր առկա ու հեռակա ուսուցմամբ,***
2. ***մագիստրոսի կրթական ծրագիր միայն հեռակա ուսուցմամբ,***
3. ***միջին մասնագիտական կրթական ծրագիր:***

Ընդունելությունը.
- **Բակալավրիատում՝**
- *Հայոց լեզու (թելադրություն)*
- **Մագիստրատուրայում՝** ***հարցազրույց:***

Մասնագիտություններ	Վարձը (հազ. դր.) առկա	Վարձը (հազ. դր.) հեռակա
Բակալավրի կրթական ծրագիր		
Հրդեհային պաշտպանություն	Անվճար	240
Փրկարարական գործ	Անվճար	240
Ճգնաժամային կառավարում	320	260
Կառավարում	320	260
Քաղաքացիական պաշտպանություն	300	240
Անվտանգությունն արտակարգ իրավիճակներում	300	240
Տրանսպորտային և հրշեջ փրկարար հատուկ տեխնիկայի շահագործում և սպասարկում	300	240
Հրդեհային անվտանգություն	300	-
Մագիստրոսի կրթական ծրագիր		
Փրկարարական գործ	-	320
Ճգնաժամային կառավարում	-	320
Կիրառական սեյսմոլոգիա	-	320
Միջին մասնագիտական կրթական ծրագիր		
Հրդեհային պաշտպանություն	150 90*	-
Հրշեջ-փրկարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում	150 90*	-
Կառավարում արտակարգ իրավիճակներում	150 90*	-

Ծանոթություն.
****Նշված վճարով ուսուցումն իրականացվում է Ստեփանավան քաղաքում:***

Միջին մասնագիտական կրթական ծրագրով գերազանց և լավ գնահատականներով շրջանավարտները կարող են առանց ընդունելության քննությունների ուսումը շարունակել ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի բակալավրի կրթական ծրագրով 2-րդ կուրսում:

ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ

Կառավարության 2017 թվականի ապրիլի 20-ի N 434-Ն որոշմամբ ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիային հատկացվել է 60 անվճար տեղ առկա ուսուցմամբ «Հրդեհային պաշտպանություն» և «Փրկարարական գործ» մասնագիտությունների գծով, որից 5-ը տրամադրվել է Արցախի Հանրապետությանը:

Իմացի՛ր և օգնի՛ր

ԱՌԱՁԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Վարակներ. անմիջական շփում. հերպես

Հերպեսը վիրուսային վարակ է, որի հարուցիչը, մի անգամ մարմին ներթափանցելով, մնում է այնտեղ մարդու ամբողջ կյանքի ընթացքում և դրսևորվում մարմնի դիմադրողականության անկման ժամանակ (գրիպ, մրսածության հիվանդություններ, ՄԻԱՎ՝ մարդու իմունային անբավարարության վիրուսային վարակ և այլն): Հերպեսը կարող է ունենալ տարբեր դրսևորումներ, օրինակ, շրթունքներին, բերանի շուրջը, ռունգերին՝ մանր բշտիկային ցավոտ ցան, քոր, իսկ մի քանի օրից ցանը դառնում է վերք, բարձրացում է մարմնի ջերմաստիճանի:

Սեռական օրգանների շրջանում կարող են առաջանալ բշտիկներ, որոնք արագ պայթում են: Այդ ցանն ուղեկցվում է ցավոտ միզարձակմամբ, քորով ու այրոցի զգացումով: Այս ձևը փոխանցվում է սեռական ճանապարհով: Սեռական վարակումը կանխելու համար պետք է օգտվել պահպանակից: Մաշկի տարածուն հերպետիկ ցանի առաջացման դեպքում պետք

է ստուգել ՄԻԱՎ-ով վարակվածությունը: Հերպեսն արտահայտվում է նաև ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ժամանակ:

Այսօր աշխարհում հայտնի է հերպեսի վարակի ավելի քան 100 տեսակ, որոնցից 8-ը վտանգավոր են մարդկանց համար: Հիվանդության անտեսումը կարող է լուրջ բարդություններ առաջացնել՝ ընդհուպ քաղցկեղ: Բուժումը պետք է կատարվի համալիր, դեղամիջոցներով: Կան նաև խոտաբույսերով բուժման եղանակներ. հոտավետ մանուշակի հյութ, դաղձի թուրմ և այլն:

Հերպեսից խուսափելու լավագույն ձևը լավ իմունիտետ ունենալն է: Իսկ սա նշանակում է ճիշտ սնվել: Նախապատվությունը տվեք բնական պարենին, օգտակար են սպիտակուցով հարուստ ձուկը, միսը, կաթնաշոռը, պանիրը, ձուն, սոյան, ծլեցրած ցորենը: Գումարած անշուշտ՝ անձնական հիգիենան: ■

Հուլիսի 7-ին երեկոյան ժամերին շրջանների զգալի մասում, 8-9-ին՝ հյուսիսային շրջաններում, 10-ին՝ Սյունիքում և Արցախում սպասվում է կարճատև անձրև և ամպրոպ, առանձին վայրերում հնարավոր է կարկուտ, քամի՝ 18-23 մ/վրկ արագությամբ: Օդի ջերմաստիճանը կնվազի 4-6 աստիճանով:

Հուլիսի 8-9-10-ին սպասվում է առանց տեղումների եղանակ, 6-7-ին երեկոյան ժամերին քաղաքի առանձին հատվածներում հնարավոր է կարճատև անձրև և ամպրոպ, ամպրոպի ժամանակ՝ քամու ուժգնացում՝ 17-20 մ/վրկ:

911 Արտակարգ թերթ
ԱԻՆ
ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

Շաբաթաթերթ

Հրատարակիչ՝ **ՀՀ ԱԻՆ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ**
Գրանցման վկայական՝
03Ա061283, 24.08.2005

Գլխավոր խմբագիր՝
Գագիկ ԵՂՅԱՆ
Համարի պատասխանատու՝
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Նյութերը չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում:
Մեջբերումներ անելիս հղումը թերթին պարտադիր է:
Տպագրված է ԱՁ «Արման Ասմանգուլյան» տպագրատանը.
Երևան, Հրաչյա Ներսիսյան, 1, 125
Ծավալը՝ 2 պայմ. տպ. մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 6.07.2017:
Տպաքանակ՝ 3401: Պատվեր՝ 26
Հասցե՝ Երևան, Աճառյան 1
Էլ փոստ՝ artakarg.tert@gmail.com, info@911tert.am
Կայք՝ www.mes.am, www.911tert.am
Հեռ.՝ 060 611 911
Գինը՝ 140 դրամ:

©
Գլխագիրը՝
Արտակ Բաղդասարյանի

Գլխագրի և վերնագրային տառատեսակները՝
Մկրտիչ Մաթևոսյանի